ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **11/մարտի/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...14... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ_Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, կեչուտ գյուղի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետների ժ/պ Ստեփանոս Վարդանյանը և Արսեն Գառնիկյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Արմինե Ղազարյանը և առաջատար մասնագետի ժ/պ Անուշ Առաքելյանը:

Նիստը վարում էր ՋԵՐՄՈՒԿ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ՄԱՐՏԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի երկրորդ՝ մարտի 11-ի նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Սուբվենցիոն ծրագրերի իրականացմամբ պայմանավորված Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկի համայնքապետարանի հաշվեկշռում առկա տրակտորը և կցորդները վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Ղազարյան

1.3. ՀՀ Վայոց ձորի մարզի Վայոց ձոր-1 (Ջերմուկ համայնքի) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Գառնիկյան

1.4. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 12-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.6. Ջերմուկ քաղաքի գերեզմանատան ընդլայնման նպատակով համայնքի բնակիչ Սամվել Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը գնելուն համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Գ. Թադևոսյան

1.7 Դրամական օգնություն տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Ա. Առաքելյան

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Արսենյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ---13--- Դեմ---0--- Ձեռնպահ---0---

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով՝

1. «Ջերմուկ քաղաքում ճոպանուղու շինությունների հիմնանորոգում և նորերի կառուցում» սուբվենցիոն ծրագրի կապիտալ սուբվենցիայի հատկացման N 01/22 պայմանագրի համաձայն ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորմամբ պայմանավորված՝ հաստատել Ջերմուկ համայնքի 2022 թվականի բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները՝

բյուջեի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» եկամտային և «04.05.05.53-ճոպանուղու հիմնանորոգում» գործառնական դասակարգումով, «5112-շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական ծախսային հոդվածները համապատասխանաբար ավելացնել 15095.8 հազար (տասնհինգ միլիոն իննսունհինգ հազար ութ հարյուր) ՀՀ դրամով՝ վերոնշյալ ծրագրերով կատարվող աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի բյուջեն՝ 2022 թվականի մարտի 11-ի դրությամբ՝

եկամուտներ՝ 865.665.085 ՀՀ դրամ

ծախսեր՝ 865.665.085 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- Դեմ----0---- Ձեռնպահ----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ՏՐԱԿՏՈՐԸ ԵՎ ԿՑՈՐԴՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Տալ համաձայնություն Ջերմուկի համայնքապետարանի հաշվեկշռում առկա Беларус 82.1 մակնիշի անիվավոր տրակտոր տրակտորը, խոտի մամլիչը և խոտ հավաքող 5-Մ (3 միավոր) մեքենա-մեխանիզմները (այսուհետ՝ շարժական գույք) մեկ տարի ժամկետով Գնդեվազ գյուղի բնակիչ Հայրապետ Մկրտչյանին վարձակալությամբ տրամադրելու առաջարկությանը՝ վարձավճարի չափը սահմանելով տարեկան 800000 (ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ համայնքի բյուջեի եկամուտների հավելյալ աղբյուր ունենալը:

2. Իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին Գնդեվազ գյուղի բնակիչ Հայրապետ Մկրտչյանի հետ կնքելու շարժական գույքի վարձակալության տրամադրման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՈՑ ՁՈՐ-1 (ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ) ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.4-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման» կարգի 61-րդ կետի դրույթները և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 26-ի N 2-7 դրական եզրակացությունը՝

1. Հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի ք. Ջերմուկ, Գնդեվազ, Կարմրաշեն, Կեչուտ, Հերհեր բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----14---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 12-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի ««Մանկական Զարգացման Հիմնադրամ»–ին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 12-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «7/41» թիվը փոխարինել «27/7» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----14---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 2-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը՝

ա) որոշման հավելված 1-ում «6» թիվը փոխարինել «7» թվով, «25» թիվը փոխարինել «26» թվով,

բ) որոշման հավելված 2-ը լրացնել նոր՝ 24-րդ տողով՝ հետևյալ բովանդակությամբ՝

24	Տնտեսվար	1	119 000	119 000

գ) որոշման հավելված 2-ի՝

1. «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» բաժինն ամփոփող «Ընդամենը» տողի «5,5» թիվը փոխարինել «6,5» թվով, «927700» թիվը փոխարինել «1046700» թվով,

2. «Ընդամենը/աշխատակազմ» տողի «24,5» թիվը փոխարինել «25,5» թվով, «4916800» թիվը փոխարինել «5035800» թվով,

3. «ԸՆԴՀԱՆՈՒՐԸ» տողի «31,5» թիվը փոխարինել «32,5» թվով, «7024162» թիվը փոխարինել «7143162» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------14 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի «Մեկ անձից գնման ընթացակարգով գնման գործընթաց կազմակերպելու մասին»N 206-Ա որոշումը՝

1. Համաձայնություն տալ Ջերմուկ քաղաքի գերեզմանատան ընդլայնման նպատակով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Սամվել Գրիգորի Հովհաննիսյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող 2,388 հա մակերեսով 10-002-459-009 կադաստրային ծածկագրով հողամասը 2 (երկու) միլիոն դրամով (առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի ու տուրքերի) գնելուն:

2. Իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին Սամվել Գրիգորի Հովհաննիսյանի հետ կնքելու հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------14 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2022 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից ֆինանսական աջակցություն տրամադրել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչներ Նարինե Դավթյանին՝ 100 000 (հարյուր հազար) և Ռուզան Բունիաթյանին՝ 300 000 (երեք հարյուր հազար) դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----14---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի ապրիլի 21-ին, ժամը՝ 16.30-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----13---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Սաֆարյան Արմենուհի Ստյոպայի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Մկրտչյան Սեակ Վանիկի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը_____